




ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ
ՀՐԱՇԱՓԱՌԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1975 թ. մարտի 30)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն:

«Տուր մեզ Տէր, ուրախութիւնը յարութեան»:

Սիրելի հավատացյալներ,

Սուրբ Հարութեան ուրախութիւնը սկիզբ առավ յողաբեր կանանց և առաջին աչցելու առաքյալների սրտերում, Քրիստոսի դատարկ գերեզմանի առաջ:

Նրանց հոգիներում է, որ առաջին անգամ փառատակեց մեծագոյն ուրախութիւնը աշխարհի բոլոր ուրախութիւնների: Վճռական էր այդ պահը, Մեծ Վարդապետի աստվածության համար, Նոր Ովստի հաղթանակի համար, պատմության համար: Արդարև, հարութեան ուրախութիւնը՝ լուսի արագութեամբ վերածվեց ամենահաղթ մի զգացումի, որ բոցավառեց և պաշտառացրեց բոլոր հոգիները Հիսուսի աշակերտների և նրանց հետևող բազմութիւնների:

Բոլոր ժամանակների մարդը բնորոշվում է մահից հետո ապրելու տենչանքով: Հիսուս իր քարոզությամբ ու իր դատարկ գերեզմանով մանավանդ, աշխարհի սրտի վրա վառեց անմար կրակը հավետ ապրելու հույսի, կրակը հարութեան ուրախության:

Հիսուսի հարությունից հիսուն օր հետո, վերնաւան մեջ այդ ուրախութիւնը պսակվեց սուրբ Հոգւոյ շողակաթումով: Այդ ուրախությամբ բխողեցավ հավատո մոր հանգանակը և հիմը դրվեց սուրբ եկեղեցու, խորհրդավոր մարմինը հարուցյալ Փրկչին Քրիստոսի:

Ի լուր հարութեան ավետիսի, անմահութեան ծարավի հոգիները մարդկանց, երկրից երկիր, սերունդէ սերունդ, բոլորը, բոլորը իրենց խենթացած ձեռքերը դեպի երկինք կարկառած աղաղակեցին՝

«Տուր մեզ Տէր, ուրախութիւնը յարութեան»:

Հարութեան ուրախությամբ նահատակվեց առաջին մարտիրոսը՝ սուրբ

Ստեփանոս, որին հետևեցին շարան-շարան, դարեր շարունակ, անձնուրաց վկաներն ու խոստովանողները Քրիստոսի, որոնք իրենց արյունով գոյակերտեցին այնտեղ, հեռուն՝ ոգեկանության աշխարհի բարձունքների վրա՝ փառքը հաղթական եկեղեցու:

Մեծ ավետիսով, Հիսուսի հարության լույսը իջավ նաև Հայոց աշխարհի վրա: Մեր ազգը առաջիններից եղավ, որ կարողացավ իր հոգու ուժերով բարձրանալ մինչև կատարները հարության գաղափարականի ու ապրել ստեղծագործ կերպով ուրախությունը անմահության:

Այդ օրվանից, հայերը և պատմությունը նրանց, հեզեցին մահը և հաղթեցին իսկ մահվան, քանզի նրանց աղոթքի ու պաշարի դրոշի վրա գրված եղավ միշտ՝ «Տուր մեզ Տէր, ուրախությունը յարության»:

Այո, հարության ուրախությամբ մեր ժողովրդի գավակները դարեր շարունակ մաքառեցին խավարի ու բարբարոսության դեմ, ու չսակարկեցին իրենց արյունը, որովհետև հավատացին՝ թե զոհաբերումը արդարության ու ազատության սեղանի վրա, բաց է անում ճանապարհը անմահության: Ծըշ-մարիտ է Եղիշե պատմիչի վկայությունը թե՛ նրանք «ի մահ համարեալ էին, և մահ իրեանց կեանք»: Միայն այդպես կարելի է բացատրել պատմական հրաշքը հայ ժողովրդի գոյատևումը:

Բուն պատմական Հայաստանի հողամասի վրա, Անիի թագավորության անկումից հետո, մոտ հազար տարի տևապես հայ ազգաբնակչությունը հարրատահարվեց, հալածվեց, բռնազաղթվեց ու անխնա կոտորվեց, մինչև մեր դարի իսկ սկզբին, երբ 1915 թվին, Արևմտյան Հայաստանում, մա զոհը դարձավ իր դեմ գործված մի անօրինակ ցեղասպանության, որ խլեց կյանքը մոտ երկու միլիոն հայերի:

Բայց մեր հավատավոր ժողովրդին վերստին վիճակվեց մահվամբ մահը հաղթել՝ «իւր քաջ որդւոց սուրբ արիւնով» և մի նոր կյանքի լուսաբացը ողջունել, քաղաքական երջանիկ իրադրության մեջ: Հայկական նոր պետության ստեղծումով սովետական մեծ եղբայրության դրոշի տակ, մեր ազգին վերջապես արդարություն եղավ: Հայ ժողովուրդը ազատ շունչ քաշեց և խաղաղության ու ապահովության պայմանների մեջ, ըմբռնեց երազ թվացող ուրախությունը իր փրկության, իր հարության:

Այսօր, սուրբ Զատիկի օրով, երբ ներշնչված ենք մահվան և հարության անճառ խորհրդովը խաչյալ Աստվածորդվուն, երբ խոսում ենք մշտանորոգ կյանքի ուժերի ու արդարության հաղթության մասին ընդդեմ չարիքի ու մահվան, երբ խոսում ենք հարության ուրախության մասին, չենք կարող չհիշել պատմության բոլոր ժամանակների այն աշխարհակործան աղետը, որ սանձազերծեց հիտլերյան Գերմանիան 1939 թվից սկսյալ, հրո ճարակ դարձնելով բազմաթիվ երկրներ, բնաջինջ անելով հարյուրավոր, հազարավոր շեն քաղաքներ, կործանելով անհամար հոյակերտ հուշարձաններ ու մշակութային արժեքներ, կոտորելով տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց: Հիտլերյան հարձակումը մի համաշխարհային ցեղասպանություն էր, գործված տասնյակ ազգությունների դեմ, ի մասնավորի ռուս ժողովրդի դեմ: Ուրիշ ազգություններին ստրկացնելու միևնույն բռնակալ կիրքը, կայսերապաշտական միևնույն անբարո ախորժակները, ինչպես վիլհելմյան Գերմանիո և Օսմանյան Կայսրության պարագային, առաջին համաշխարհային պատերազմին:

Խորհրդանշական է, որ այս տարի, երբ հայ ժողովուրդը Հայաստանում և արտասահմանում ոգեկոչում է վաթսուամյա տխուր հիշատակը Ապրիլյան եղեռնի, մեր օրերի ամբողջ աշխարհը, բայց մասնավոր՝ Սովետական

Միության ժողովուրդները՝ խոր երկյուղածությամբ խոնարհվում են իրենց բազմամիլիոն զոհերի հիշատակի առաջ, երախտագիտությամբ հիշում են իրենց անթիվ-անհամար հերոս զավակների սխրագործությունները և տոնախմբում են պատմական հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի:

Սովետական ժողովուրդների այս մեծ հաղթանակի երեսնամյակի սեմին, Մենք, իբրև Հայոց Հայրապետ, մխիթարված ենք խորապես այն իրողությամբ, որ մեր փոքր ժողովուրդն էլ իր եղբայր ժողովուրդների կողքին, հավասար քաջությամբ կռվեց հայրենիքի թշնամիների դեմ, հավասար հերոսությամբ զոհեր տվեց հայրենիքի փրկության ի խնդիր, ու արժանի դարձավ գալիք սերունդների երախտագիտության: Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, գլխավորությամբ երջանկահիշատակ Գեորգ Զ հայրենասեր կաթողիկոսի, բոլոր ուժերով իր մասնակցությունը բերեց Հայրենական պատերազմին, ամրապնդելով հայաստանցի ժողովրդի միասնությունը և կռվելու կամքը՝ հանուն արդար հաղթանակի և ապահովելով բարոյական ու նյութական օժանդակությունը արտասահմանի հայության, որով հնարավոր դարձավ սովետական բանակին նվիրաբերել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը խորհրդանշեց համայն հայ ժողովրդի սերն ու նվիրումը դեպի սովետական հայրենիքը:

Ահարկու էին թշնամու ուժերը, ամենուր մահ ու սարսափ սփռող: Սովետական երկրում պահեր եղան, երբ կարծեք աշխարհի վերջն էր մոտենում: Սակայն իրենց ժողովուրդների կյանքի ու ազատության համար մարտնչող զինվորների առասպելական հերոսությունը, նահատակվող ազգաբնակչության անհավատալի տոկունությունը և մահն իսկ հաղթելու պողպատյա ոգին, ճեղքեցին հիտլերյան դժոխքը և ջախջախեցին գլուխները բոլոր վիշապների: Ստրկացված ազգերը մեկը մյուսի ետևից ազատագրվեցին նացիզմի ու ֆաշիզմի ճիրաններից, ազատագրվեց նաև գերմանացի ժողովուրդը ինքը, որովհետև ազատ չէ այն ժողովուրդը, որը խափանում է ազատությունը այլ ժողովուրդների:

Արեւելից արեմուտք, հյուսիսից հարավ, աշխարհը ամբողջ ցնծության մեջ էր: Բոլոր հորիզոններից շեփորվում էր հաղթանակ, հաղթանակ: Հաղթանակը արդարության ու ազատության ուժերի, հաղթանակը մարդկանց և ազգությունների հավասարության գաղափարի, հաղթանակը մեծ ու փոքր ազգությունների խաղաղ գոյակցության սկզբունքի: 1945 թվականի մայիսի 9-ին, աշխարհի պատմության ճակատին արձանագրվեց վկայությունը մեծագույն հաղթանակի, վկայությունը մեծագույն ուրախության: Արյունաքամ եղած սովետական ժողովուրդների համար ու նաև մեր փոքր ազգի համար, մայիսյան հաղթանակը հանդիսացավ սկիզբը բոլոր ուրախությունների, սկիզբը նոր ու խաղաղ նվաճումների:

Այսօր, երբ բազմադարյան այս սուրբ տաճարի մեջ, հավաքված Փրկչի Իջման սեղանի շուրջ, ոգեկոչում ենք մեծ խորհուրդը Քրիստոսի դատարկ գերեզմանի, մեր սրտերը լի հրաշալի հարության ուրախությամբ, արդար է, որ հիշենք ու փառաբանենք պատմական մեծ հաղթանակը և նոր կյանքի արշալույսը Սովետական Միության եղբայրացած ազգությունների, արդար է նաև, որ ուխտենք սուրբ պահել հիշատակը Ապրիլյան եղեռնի մեր նահատակների, ու երբեք չտկարանալ մեր կյանքում՝ հավատարիմ մնալու նրանց ազնիվ երազանքներին և արդար է, որ անհուն հրճվանքով ողջունենք լուսաշող վերածնունդը մեր մայր երկրի ու ոսկի ապագան՝ մահվամբ մահը միշտ հաղթող մեր անմահ ժողովրդի:

Հիշենք մեռելներին, պանծացնենք հերոսներին: Փառք տանք հաղթության: Հավատանք մանավանդ սուրբ Հարության հրաշքին և աղոթենք, որ հրա բարիաշատ շնորհներով, աստվածատուր սիրո պաշտոն արևը հաղթականորեն ճառագայթի բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների հոգիներից ներս և խաղաղության ու արդարության ձայնը հզորապես հնչի հորիզոնից հորիզոն մարդկային աշխարհի ու պատմության մեջ, այժմ և հավիտյան:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իրով մեզ զկեանս պարգևեաց». ամեն:

